

891-590

(U-27)

Умываю

пальцы и ногти умываю

в прорезываю



ԳԵՂԱՄ ՍԱՐՅԱՆ

ԻՍՊԱՆԻԱՅԻ ՊԱՏԱՆԻ ՀԵՐՈՍՆԵՐԸ



891.995
U-27

ՊԵՏՂՈՍ

1936


ՅԵՐԵՎԱՆ

2011-07

ԳԵՂԱՄ ՍԱՐՅԱՆ

891.99Լ
U-27
ԱԿ

ԻՍՊԱՆԻԱՅԻ
ՊԱՏԱՆԻ ՀԵՐՈՍՆԵՐԸ



ԿԵՐԻ
1010
41093



ՊԵՏՂՐԱՏ
ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՑ ԾԱՆԿԱ-ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ 1937

Պատ. խմբագիր՝ Եղ. Չ ո փ ու ռ յ ա Ն
Տեխ. խմբագիր՝ Լ. Ո հ ա Ն , ա Ն
Արբագրիչ՝ Ռ. Ն Ե ա Ն յ ա Ն

Գլավիհի լիազոր Ա.—1200, Հրատ. 3946
Պատվեր 1407, սիրած 3000

Պետհրատի սպարան, Յերեվան, II ԿՈՆՆՅԱՆՑԻ, 4

ԽՈՒԱՆ ԹՈՐՆԱԴ

Պուան Թորնադ, դու վորբացար,
Կարդացի լես քո մասին,
Դու կովում ես արիաբար
Բոլորի հետ միասին:

Բորբոքվում ե զիտեմ հիմի
Վրեժխնդիր քո հոգին,
Պուան Թորնադ, դու ամենի
Խսպանիալի քաջ վորդին:

Ազատութունն ե կանչում քեզ,
Յեվ վրեժը հալրական,
Դու վառվում ես ալ բոցի պես,
Փպտում ե քեզ ապագան:

Յեվ հիմա լես լերկրից ազատ
Վողջույններ եմ հղում քեզ,
Պուան Թորնադ, իմ հարազատ,
Իմ հարազատ լեղբոր պես:

1

Դեռ թնդում ե կռիվն անեղ,
Կորդովալի ճակատում,
Ֆաշիստների արյունահեղ
Գնդակներն են ճարձատում:

Յեվ նրանց դեմ մինչ իրիկուն,
Բանվորական մի շուկատ,
Կրակում ե, կրակում ե,
Կրակում ե անընդհատ:

Ու կովում ե նրանց շարքում,
Մի պատանի արևաչ,
Ահեղ ուռմբեր են տրաքում,
Բայց անվախ ե տղան քաջ:

Խուան Թորնադ ե անունը
Այդ քաջարի պատանու,
Պատերազմի տաք սամումը
Նրան կովի չե տանում:

Յեվ կովում ե արիաբար,
Գնդակներով իր դիպուկ,
Մարտը բռնած ձորեր ու սար,
Շառաչում ե վորպես բուք:

Շառաչում ե և վորպես ամպ
Իսպանիայի հանդերում,
Վառողի ծուխն ե թանձրությամբ:
Քուլա-քուլա դեզերում:

Յեվ ընկնում են հերոսաբար,
Յեվ բարձրանում են ելի,
Դղրդում են ձորեր ու սար,
Վորտաներից ահռելի:

Ու կովում ե նրանց շարքում
Խուան Թորնադ պատանին,
Մինչեվ մութը Իսպանիայում
Սար ու դաշտեր պատանի:

Մինչև իջնի գիշերը խոր
Յեվ աստղերը նայեն վար.
Մինչև քարերն հազարավոր,
Բարձեր դառնան հոգատար:

Ու թնդում ե կռիվն անեղ
Կորդովալի ճակատում,
Ֆաշիստների արյունահեղ
Գնդակներն են ճարճատում:

Յեվ նրանց դեմ, մինչ իրիկուն.
Բանվորական մի շուկատ
Կրակում ե, կրակում ե,
Կրակում ե անընդհատ:

2

Խուան Թորնադը չի քնում,
Գլուխն հենած մի քարի,
Պատանին դեռ միտք ե անում
Հայացքն աստղոտ կամարին:

Մտածում ե և խոհերն իր
Նրան տանում են հեռու,
Դեպի ազատ մի նոր լերկիր
Հեռու-հեռու ափերում:

Յեվ այդ լերկիրն ե հարազատ,
Թուշում մտքով նա արթուն
Կոչվում ե այդ լերկիրն ազատ,
Խորհրդային Միություն:

Խուան Թորնադը մինչև մահ
Մինչև իր շունչը վերջին,
Կմաքառի, կկովի նա,
Դիրքի վրա առաջին:

Բայց հրաման չեկավ յերեկ,
Բանվորական շոկատին,
«Հավաքեցեք թիկունք տարեք,
Կովի անեղ ճակատից»

Ովքեր փոքր են, մանկահասակ,
Մինչև տասնվեց տարեկան,
Նրանք պիտի գնդակի տակ
Ու ճակատում չմնան»:

Խուան Թորնադը չի գնա
Ու չի մնա թիկունքում,
Յեվ լուսինն է նրա վրա
Ծիծաղում լուռ յերկնքում:

Յեվ տեսնում է կարծես նա իր,
Հորը կացնով գլխատված,
Ու թվում է մի գույգ կարմիր
Աչք է նայում նրան բաց:

Վոչ, ճակատից նա չի գնա,
Ու չի մնա թիկունքում,
Ու հանկարծ իր գլխում անա՛հ
Մի վառ միտք է բռնկում:

Խուան Թորնադը չի քնում,
Գլուխն հենած մի քարի,
Ու մի հնար է վորոնում,
Ինչպես միտքը կատարի:

Վոչ, ճակատից նա չի գնա,
Ու չի մնա թիկունքում,
Յեվ լուսինն է նրա վրա
Ծիծաղում լուռ յերկնքում:

Յեվ պատանին առավոտ վաղ,
Ըշտաբ մտավ համարձակ,
Դեմքը գունատ, սրտում մատաղ,
Բողոքն ինչպես տաք գնդակ:

— Խուան Թորնադն ուզում է վոր
Հրաժեշտ տա մորն անքուն,
Խնդրում է նա ազատ մի ուր,
Ու նոր լինի թիկունքում:

— Խուան Թորնադ, գնա ասաց
Ըշտաբի պեսն հայրաբար,
Ու տղալի աչքերը թաց,
Լուռ կախվեցին դեպի վար:


3

Նա հրաժեշտ տվեց պետին,
Ու դուրս յելավ համարձակ,
Դեմքը գունատ, խորքում սրտի
Բողոքն ինչպես տաք գնդակ:

Յեվ պատանին անցավ, գնաց
Խրամներով թումբ առ թումբ,
Մարտադաշտում կարծես հանկարծ
Վորոտացին հազար ումբ:

Թվաց նրան կանչում ելին,
Գնդակները ճարճատուն,
Ասում ելին ձայնով ուժգին,
— Արի, կովիք ճակատում:

Յեվ պատանին նայում է լետ,
Շարունակում իր ճամբան,
Իր համարձակ խոհերի հետ,
Յեվ քայլերով հաղթական:



Խուան թորնադն. այնպիսի բան
Պիտի անի քաջաբար,
Վոր կովելու իրավունք տան
Մեծերի հետ հավասար:

Յեվ պատանին խիզախ ու լուռ,
Միրաը լցված վրեժ, ցավ:
Անցավ հաստատ կամքով ամուր,
Իր խոհերով հեռացավ:

Ու թվում եր կանչում ելին,
Գնդակները ճարճատուն,
Ու թվում եր, ասում ելին,
— Արի կովիր ճակատում:

4

Յեվ որն ամբողջ թափառեց նա,
Մահմաններում թշնամու,
Յեվ արևն եր նրա վրա,
Իր բորբ շողերը քամում,

Յեվ քամին եր ուժեղ թափով,
Խփվում նրա լերեսին,
Գնում եր նա գետի ափով,
Ու գետի հետ միասին:

Յեվ մագլցում եր ժառերով,
Յեվ անցնում եր դաշտ ու ձոր
Բայց մութն արդեն սև թևերով,
Գրկեց լեռներն ահավոր:

Հանկարծ մի ձայն լսեց կարծես,
Ու թագ կացավ քարի տակ,
Չոր գլորվող մի քարի պես,
Պայթեց հեռվում մի գնդակ:

Յե՛վ պատանին առաջ սողաց,
Դիրքերն ելին թշնամու,
Այնտեղ հողմն եր բերանը բաց,
Փռչեխուիվ սլանում:

Խուան թորանդը կգտնի
Գնդացիքը անպայման,
Բաց շուկով, կարծես գաղտնի,
Լավեց մթնում ինչ վոր ձայն:

Խոսում ելին լոթ զինվորներ,
Չոր քարերին նստոտած,
— Ա՛խ, փախչելու հնար լիներ
Մեզմ հառաչեց մեկն հանկարծ:

— Համաձայն եմ լես ել դրան —
Ասաց ուրիշ մի զինվոր:
— Կը տանեմ ձեզ — հնչեց մի ձայն
Մթնում խոր ու ահավոր:

Յե՛վ լոթ զինվոր ահաբեկված
Գույն ստացան քաթանի,
Ու կանգնել եր նրանց դիմաց,
Խուան թորնադ պատանին:

— Ո՞վ ես տղա, — հնչեց մի ձայն —
Ի՞նչ ես անում այստեղ դու,
— Չոկատից եմ բանվորական
Ու մեկնեց նա մի հին թուղթ:

Յե՛վ պատանին պատմեց նրանց,
Պատմութունն իր համարձակ,
Ու լուսինն եր լուռ ու կամաց,
Մտնում մռայլ ամպի տակ:

— Իսկ լեթե մենք քեզ անխնա
Նվիրենք մի հավերժ քուն...
— Լավ ե այստեղ գրկել սե մահ,
Քան թե ապրել թիկունքում:

Յե՛վ հիացած այդ պատանու
Խիզախությամբ անվեհեր,
Յոթ զինվորները թշնամու,
Միանգամից լելան վեր:

— Տար մեզ տղա, շոկատը ձեր
Քեզ հետ գալիս ենք արդեն,
Խուան թորնադը անվեհեր,
Կանգնեց նրանց դեմ ու դեմ:


— Կապեցեք դուք ձեր զենքերը,
Ու տվեք իմ շալակին,
Յերբ կհասնենք մեր դիրքերը,
Յետ կստանաք դուք կրկին:

Յե՛վ պատանին առած ուսին,
Չենքերը մի ծանր բեռ,
Չինվորների հետ միասին
Իջավ կամաց ձորն ի վեր:

5

Ուշ եր արդեն, խորունկ գիշեր,
Լուսինն եր լուռ դեգերում,
Վողջ շոկատին քունն եր իջել
Բանվորական դիրքերում:

Լոկ պահակն ե շրջում անքուն,
Գնում ե նա ու գալի,
Յե՛վ հսկում ե նա բարձունքում,
Լուության մեջ ահալի:



Հանկարծ լսեց քայլերի ձայն,
Յեվ նայեց նա դեռ ու դեն,
Կարծես քայլերը մոտեցան,
Ու լերևում են արդեն:

— Ո՞վ ե, — կանչեց նա ահալի.
Արձադանքեց մի այլ ձայն,
— Խուան Թորնադն ե յետ գալի:
Ու բոլորը մոտեցան:

— Իսկ ո՞վքեր են քեզ հետ սրանք,
Ու նայեց նա կասկածոտ:
— Խոստացել եմ սրանց չես կլանք,
Առել բերել եմ մեզ մոտ:

Ու գնացին նրանք շտաբ
Պահակի հետ միասին,
Պետը տեղից չելավ շտապ,
Խորունկ գարմանք լերեսին:

— Խուան Թորնադն ե չեկել յետ —
Փպտուն նայեց նա պետին,
Յոթ զինվոր ե բերել իր հետ.
Միացնելու ջոկատին:

Յեվ պատանին պատմեց նրան,
Ինչ վիշտ ուներ իր հոգում,
Խնդրեց նրան աղաչաձայն,
Վոր չլինի թիկունքում:

— Կեցցես, տղաս, իմ քաջարի,
Ասաց պետը հայրաբար —
Մնա այստեղ ու պաշքարիլը,
Մեծերի հետ հավասար:

Յեվ քանի վոր քեզ նման շատ,
Պատանիներ կան այսքան:
Ազատութիւնը հարազատ
Կնվաճի Իսպանիան:

Լույս եր արդեն: Լեռան շուրթին,
Արփին վարսերն եր քանդում,
Յերբ գնդակները առաջին,
Վորոտացին ջինջ ողում:

Յեվ սկսեց վառողի բուք,
Կորզովայի ճակատում,
Խուան Թորնազն արդեն գիպուկ
Գնդակներ եր ճարճատում:

*
**

Խուան Թորնազ, պատանի վառ,
Կարդացի լես քո մասին
Դու կովում ես արիաբար
Բոլորի հետ միասին:

Յեվ հիմա լես լերկրից ազատ,
Վողջույններ եմ հղում քեզ,
Խուան Թորնազ, իմ հարազատ,
Իմ հարազատ լեզբոր պես:

ԱԼՎԱՐՈ

Թախո գետն ե ոճագալար
Ալիք ալիք հոսում,
Ալիքները գրկած իրար,
Իրար հետ են խոսում:
Յեվ անցնում են ու աղմկում,
Ու փրփուր են տալի,
Մտերի շուքն ե բեկբեկուն
Ջրում գնում գալի:

Թախո գետի ափով կանաչ՝
Մի քաջ տղա գինված,
Քալում ե լուռ դեպի առաջ,
Հետախուզման լեւած:
Թփուտների մեջ աննկատ,
Ճամփով արեալի,
Ալվարոն ե լերիտասարդ
Թուղզույից գալի:


Ջոկատից ե բանվորական,
Յեվ քաջ, և աննկուն,
Նրա գնդակը հաղթական
Յերբեք չի վերիպում:
Թախո գետն ե ոճագալար
Ալիք-ալիք հոսում,
Յեվ Ալվարոն ե խանդավառ
Մտքերի հետ խոսում:

— Իսպանիա, քեզ ազատութիւն
 Մենք կըբերենք արչամբ,
 Քեզ վառողի ծուխն ե պատում
 Հիմա ինչպես սև ամպ.
 Ազատութեան արևով վառ
 Կըցրենք ամպ ու մեզ,
 Ու կլինենք կովում համառ,
 Ձենք նահանջի լերբեր:

Յեվ քայլում ե թողած անա
 Մի բարձրաբերձ կամուրջ,
 Վոր հսկում ե գետի վրրա,
 Արծվի պես լուռ ու մունջ.
 Թախո գետի ափով կանաչ
 Խոհերի մեջ թաղված,
 Ալվարոն ե գնում առաջ՝
 Վտաքից գըլուխ զինված:

Բայց նկատում ե նա հեռվում
 Թանձր փոշի հանկարծ.
 — Արգոք քամի՛ն ե այդ պարում
 Փոշու սլուներ հագած.
 Արեգակն ե այնտեղ քամում
 Տաք գուրշին ջրի,
 Թե՛ գորամասն ե թշնամու
 Ստորտում բլրի:

Յեվ ակնապիշ նայում ե լուռ
 Ալվարոն իր տեղում,
 Բայց արևի տակ բազում սուր
 Նիզակներ են շողում.
 — Ջորամաս ե ֆաշիստական,
 Վոհմակի պես գայլի,



4505 0101
 41093




Վոր գազազած, ծարավ արջան
Թուեղո լե գալի:

Բայց նա ինչպես ջուհատ գընա,
Ինչպես իմաց անի,
Մինչև գընա, կգա հիմա,
Կրհասնի թշնամին.
Յեվ ինչպես մի ուրուր ողում:
Սավառներով գա ցած,
Խիզախ մի միտք ե պտտում
Նրա գլխում հանկարծ:

Յեվ նետվում ե ափով նա լետ:
Թփերն որորելով,
Ձգուլը, իր քաջ խոհերի հետ,
Ինչպես թեթև մի հով.
Մագլցում ե կամուրջն ի վեր,
Կանգ ե առնում այնտեղ,
Վորպես արծիվը անվեհեր -
Հայացքով իր անեղ:

Ու մտած մի ծառի լետև
Նայում ե նա հեռու,
Իր շուրթերին հովը թեթև
Յերգի ձայն ե բերում.
Մոտենում են կարծես նրանք,
Բարձրանում ե փոշին,
Ինչպես կիզիչ արևի տակ
Հողի տաք գուրջին:

Յեկան ահա: Ալվարոն քաջ
Հանգիստ նայում ե ցած,
Թեքվել ե նա դեպի առաջ՝
Հրրացանին կքած:



Յեվ ինչպես գոռ մի սուր կայծակ,
Ամպրոպի խիստ վորոտ,
Շառաչունով մի թեժ գնդակ
Պայթեց գորգերի մոտ:

Ընկավ զինվորը առաջին,
Յեվ լերկրորդը ահա,
Ու կրրակում է կամուրջից
Քաջ Ալվարոն անահ:

Յեվ թշնամին է կրակում
Գնդակներն իր բազում,
Յեվ գնդացիքն է անհատնում
Վառող ու հուր հագում:

Յեվ զղրդում են սար ու ձոր,
Մարտը առնում է թափ,
Ու կամուրջից կարծես հզոր
Կովում է վողջ ջոկատ:
Ընկավ զինվորը իններորդ,
Յեվ տասներորդն ահա,
Կըրրակում է դեռ անհողգող
Քաջ Ալվարոն անահ:

Ու գնդակները թշնամու
Կատաղությամբ անհուն,
Վորպես մրրիկ, վորպես սամում
Կամուրջին են խփում:
Ու կարծես թե լետ են դառնում
Վորոտումով ահա,
Յեվ արյան փայլ է նկատվում
Թախտ գետ ի վըրա:
Ընկավ զինվորն քսաներորդ,
Յեվ նորերը ահա,

Դեռ կըրրակում է անհողգող
Քաջ Ալվարոն անահ:

Յեվ բռնել է դաշտեր ու սար
Մարտի վորոտ, շառաչ,
Ու թշնամին արդեն համառ
Գըրոհում է առաջ:

Յեվ մազլցում է արդեն վեր
Դեպի կամուրջն անեղ.
Ու Ալվարոն չի փախչում դեռ,
Կըրրակում է այնտեղ.
Նա իր վերջին ուժն է լարում
Քաջ առյուծի նման,
Բայց թշնամին արդեն վերում
Ողակել է նրան:

Ու կատաղած մի սառ սվին
Խրվեց կողը նրա,
Յեվ Ալվարոն գետի ափին
Ճչաց խոտի վըրա:
Ընկավ: Աչքերը մթնեցին:
Ծանր է շնչում արդեն:
Ու մարում էր գետի ափին
Մի բորբ իրիկնագեմ:

.

Լուսաբաց էր: Բոցի նման
Արփին փայլ էր տալի,
Մի ջոկատ էր բանվորական
Թուեղուլից գալի.
Արդեն ջարդել էր թշնամուն,

Գալիս եր թափ առած.
Ուր վարսերը հանձնած քամուհն՝
Ալվարոն եր պառկած:

Ու լերը բացեց աչքերը նա
Առավոտյան հովում,
Նրա վառվող ճակատն անա
Մի սառ ձեռք եր շոյում.
Ճանաչեց նա, ժպտաց նրանց,
Իր ընկերներն ելին,
Ձեռքով նշան արավ կամաց
Բոլոր մարտիկներին:

— Իսկ ինչո՞ւ դու գետը չընկար,
Չե՞ վոր լողալ գիտես
Յեվ Ալվարոն թույլ ու անկար
Հաղիվ պատասխանեց.
— Յես դեռ չեյի սպառել իմ
Գնդակները բոլոր...
Յեվ նրա թույլ դեղին դեմքին
Մահն եր իջնում անդորր...

Մեռնում ե նա: Աչքերը խոր
Հեռուներն են նայում.
— Ուրախ կլինի կյանքը մի ուր
Ազատ Իսպանիայում...
Հանգեց: Վերջին խոսքը նրա
Առավ քնքուշ մի հով,
Ու սլացավ, սլացավ նա
Ամբողջ Իսպանիայով...

Թախո գետի կանաչ ափում
Կա մի շիրիմ պայծառ.
Ալվարոն ե այնտեղ ննջում՝
Վըրան թեքված մի ծառ,
Այնտեղ ջրերն են աղմկում
Ու փրփուր են տալի,
Մառերի շուքն ե բեկբեկուն
Ջրում գնում գալի:

ՖՐԱՆՍԻՍԿՍ ՍՈՒԱՆ

Գուադարրամի բարձր լեռներում
Ամպրոպն է արդյոք պայթում անարկու,
Կայծակն այնտեղ իր սուրը սրում
Պատուելով լեռան ամպի վերարկուն:
Վոչ: Մարտն է այնտեղ շառաչում խրոխտ
Դե-Լեոն բլրի սահմանների մոտ:
Վոչ: Ռումբերի դու թինդն է անարկու-
Փռել լեռներին ծխի վերարկու.
Վոչ: Գնդակների պայթյունն է հատու՝
Գայծակների պես ողբ ծվատում:

1

Յերկու ջոկատներ, բռնած ձոր ու սար,
Վառողի բուքով խփում են իրար.
Յեվ ինչպես թանձրր ածուխի փոշի,
Ծուխն է տարածվում լեռների դոշին:
Մի ֆաշիստական ջոկատ մոլեգնած
Բռնել է հովտում զիրքեր անհամար,
Հազում է այնտեղ գնդացիին անսանձ՝
Դե-Լեոն բլրուրն առնելու համար:
Յեվ նրա զիմաց մի քաջ զորաշար,
Մի բանվորական ջոկատ քաջարի,
Բլրի լանջերից կռվում է համառ,
Յեվ վորոտում են ժայռերն վիթխարի:
Յեվ զղրում են ձորերն անարկու,

Յեվ մարտիկներ են ընկնում վիրավոր,
Յեվ լսվում են խուլ նրանց արանքում,
Մահամերձների ճիչերն անավոր:
Բայց անա մի արկ հողի մեջ խրված՝
Պայթում է այնտեղ անուշի ուժով,
Հողի մի բեկոր փոշի դարձրած՝
Պատում է ծխի, փոշու մշուշով:
Ու չերբ մշուշը իջնում է կամաց,
Յերևում է պարզ դեմքերից մեկում,
Յեռանդով լեցուն, մի քարի կքած՝
Մի քաջ աղջիկ է թափով կրքակում:
Վառվում են կարծես աչքերը նրա,
Այտերի վրա շիկնել են վարդեր,
Տասնիննը գարուն ուսերի վրա,
Քաջի անուն է վաստակել արդեն:
— Ֆրանսիսկա Սուլան — հայտնի չե նրա
Անունը պայծառ, քաջությունն անհուն,
Այդ արծիվների վոգին է անահ
Գուադարրամի բարձր լեռներում:
Այդ մրրիկների հեքն է սրընթաց,
Վոր գալարվում է արձակ դաշտերում,
Այդ ազատության կանչն է սրտաբաց՝
Վոր արիության վոգի չե բերում:
Յեվ կրակում է աղջիկը արի,
Յեվ նրա կողքին ձայնով առնական
Կանչն է վորոտում հրամանատարի,
Ու զղրում են ումբ ու հրրացան:
Յեվ ինչպես հպարտ արծիվ թևաբաց՝
Կանգնած անվեհեր բարձր քարափում,
Յեռանդով լեցուն, մի քարի կքած.
Մի քաջ աղջիկ է թափով կրակում:

Նոր եր լուսացել առավոտն այնտեղ,
 Ամպերի տակից գունդն արեգակի
 Վորպես թեժ մի արկ նայում ե անեղ,
 Ու թվում ե թե պիտի տրաքի,
 Ու թվում ե թե ամպերը կարմրած
 Կախված լերկնքի բարձր կամարում,
 Արնոտ հայացքով լուռ նայում են ցած՝
 Ու ուզմադաշտին արյուն են քամում.
 Իսկ կռիվն այնտեղ վորոտում ե դեռ,
 Դղրդում են դեռ ձորերն ահարկու,
 Գուռադարբամի լեռները այնտեղ
 Հագել են ծխի թանձրը վերարկու:
 Բայց հանկարծ այնտեղ, իր դիրքի վերա՝
 Փրանսիական Սոլանն ասես գունատվեց,
 Զովեցին ասից աչքերը նրա,
 Ու հազիվ զսպեց իր հուզմունքը մեծ:
 — Ընկավ գոչեց նա ու վազեց արագ:
 Դիրքից դիրք անցավ բոթը վայրկյանում:
 Հրամանատարը մի քարի վրա
 Մահվան հետ վերջին կռիվն եր անում:
 Աղջիկը գրկեց գլուխը նրա:
 Աչքերը արդեն մարում են հանդարտ.
 — Այդպես մեռնում են լեռների վրա
 Խիզախ, քաջարի արծիվներն հպարտ:
 — Մեռավ: Գրլուխը հրամանատարի
 Փրանսիական Սոլանն հենեց մի քարի,
 Ու վեր բարձրացավ հուզմունքով անհուն՝
 Արձակ վարսերը հանձնելով քամուն:
 — Մեռավ—վորոտաց դիրքերում բոլոր
 Յեվ ի պատիվ քաջ հրամանատարի,
 Հրրացաններն զարկերով հզոր՝
 Պատվի խոսք ասաց գորբը քաջարի:

Յեվ իբրև սրտի ցանկութունն անկեղծ,
 Վողջ ուզմադաշտը մի մարդու նման,
 Բոլոր դիրքերով մեկ աղաղակեց.
 — Վարի՛ր մեր մարտը, Փրանսիական Սոլանն:
 Յեվ աղջիկը քաջ ցատումով լցված,
 Իբրև նշան իր համաձայնութան,
 Յերկու ձեռքերը վեր բարձրացրած՝
 Առաջ շարժվելու տրվեց հրաման:

Մաստկացավ անեղ կռիվն ավելի,
 Աշխույժ են պայթում գնդակները թեժ,
 Ամեն մարտիկի սրտում ամենի՝
 Բռնկել ե մի կատաղի վրբեժ:
 Առաջ են շարժվում նրանք քայլ առ քայլ,
 Գնդացիքն անեղ թափում ե կրակ.
 Փրանսիական Սոլանն անահ, անալալ՝
 Զորքի հետ իջավ արդեն բլրի տակ:
 Յեվ հոյն ե շոյում ճակատը նրա,
 Յեվ կրակ կտրած կովում ե արի,
 Թվում ե հեռվից հասնում ե իրան՝
 Զայնը մահացած հրամանատարի:
 Յեվ վոզի առած շարժվում ե առաջ,
 Փաշխտներն արդեն նահանջում են լետ,
 Փրանսիական Սոլանն իսպանուհին քաջ՝
 Վազում ե արդեն իր ջոկատի հետ:
 Թնդում ե հովիտն աղմուկով զվարթ,
 Զոկատն առաջ ե սլանում ահա,
 Փրանսիական Սոլանն առջևից հպարտ՝
 Առաջին գլուզն ե ներս մտնում անահ,
 Մաստկացավ անեղ կռիվն ավելի,
 Աշխույժ են պայթում գնդակները թեժ,

Ամեն մարտիկի սրտում ամենի՛
 Բռնկել է մի կատաղի վրեժ:
 Յե՛վ մոլեգնուլթյամբ վառվող բոցի պես՝
 Առաջ է գնում աղջիկը արի,
 Թվում է հանկարծ հետ մնաց կարծես
 Քաջաբլի շղթան իր սլունաշարի:
 Ու չետ է նայում: Զոկատը չկա:
 Փաշխտ գորքերն են ողակել նրան,
 Ու թպրտում է սիրտը աղջկա՝
 Մորթված, խոշտանգված աղափուռ նման:
 Հանկարծ չերեսին իջավ մի ապտակ,
 Փաշխտ մի սպա, զինվորներ չերկու,
 Մոտեցան նրան, խոժոռ, դժնդակ,
 Յե՛վ սպան գոռաց ձայնով ահարկու:
 — Դե, առաջ ընկիր, գնանք անարգ կին:
 Վախը մոռացավ աղջիկը հանկարծ,⁷
 Զգվանքով նայեց սպայի դեմքին,
 Խիզախ քայլվածքով նրանց հետ գնաց:
 Իսկ հեռվում մարտը վորոտում է դեռ,
 Դրզրգում են խոր ձորերն ահարկու,
 Գուռադարբամի լեւները այնտեղ
 Հագել են ծխի թանձր վերարկու:

4

Մայրամուտն է լուռ ստվերում այնտեղ,
 Լեռան պուռնգից գունդն արեգակի,
 Վորպես թե՛ մի արկ նայում է այնտեղ,
 Ու թվում է թե պիտի աըրաքի:
 Մարեց: Ու խաղաղ չերեկոն կարծես
 Թանձրացավ թախծոտ ու կապույտ մեգում,
 Հայած արծաթի կալլակների պես
 Աստղեր կախվեցին խորունկ չերկնքում:



Ու բաց լերկնի տակ, նստած մի քարի,
 Ֆրանսիսկա Սոլանն ընկած մտքի ծով,
 Շուրջը պահակն և դանդաղ ման գալի՝
 Իսպանական մի լերդի սուլոցով:
 Հովը մազերն և անուժ ցիր ու ցան,
 Տանում և նրա մտքերը հեռու:
 Կա մի հեռավոր բերդ ազատութեան՝
 Աշխարհի հեռու, հեռու ափերում:
 Այնտեղ մահի դեմ լեղան համարձակ,
 Ազատութունը արյամբ ձեռք բերին...
 Յե՛վ աստղերով լի ջինջ կամարի տակ
 Զեփյուռն եր փարվում նրա վարսերին
 Բայց ահա նրան տանում են կրկին:
 Շտաբ և մտնում իսպանուհին քաջ.
 Մի ֆաշիստ սպա չար ծաղրը դեմքին,
 Քալում և դեպի նրան ընդառաջ:
 — Դե՛, մտածեցիք լերևի արդեն:
 Ապրելը լավ չե՛, քան մահը դաժան:
 Ֆրանսիսկա Սոլանն անվախ նրա դեմ
 Համարձակ գոչեց—պատրաստ եմ մահվան:
 Յես վոչինչ, վոչինչ չեմ ասելու ձեզ,
 Դուք կարող եք ինձ անել կացնահար,
 Մահը ընդունել քաջ հերոսի պես՝
 Այդ վերջին, վերջին փառքն և ինձ համար:
 Սպան խստասիրտ նայեց աղջկան,
 Հետո շուռ լեկավ, քալեց դես ու դեն:
 — Ե՛ր, հի՛ կա այդտեղ դուրս տարեք սրան,
 Կանգնեց մի դահիճ քաջ աղջկա դեմ:
 — Մտածիր մեկ ել հորդորեց սպան,
 Վերջին անգամ քեզ դիմում եմ հիմա.
 — Յե՛վ աղջիկը քաջ տվեց պատասխան.
 — Արդեն պատրաստ եմ ընդունելու մահ:



974

Յեվ դահիճի հետ զընաց համարձակ,
Գրուեմ աստղալի գիշեր եր պայծառ
Հուսինը՝ վորպես սառած մի դիակ,
Լեռան պռունգից լուռ նայում եր վար՝
Ամալի դաշտում փայլեց մի կացին,
Գըլուխն աղջկա ճիշով ընկավ վար,
Աստղերը վերում լուռ սարսուռացին
Հուսինը վերից ժպտաց ապշահար՝
Ու հովը չերկար շուքեց այդ գիշեր
Այդ քաջ աղջկա վարսերը արձակ,
Կարծես թախիժով փողբում եր մի սեր՝
Աստղալից չերկնի ջինջ կամարի տակ:

*
* *

Իսկ առավոտյան՝ ջրկատն աղջրկա,
Տաք կրակոցով հեղեղի նման,
Անցավ այդ ամա դաշտով արևկա
Լցված վրեժի թուլնով անսահման:
Յեվ թվում եր թե՛ նրանց հետ մեկտեղ
Ֆրանսիսկա Սուլան իսպանուհին քաջ
Կանչում ե զվարթ, կովում ե անեղ,
Ու հողմի նման սըլանում առաջ.
Ու կռիվն անեղ վորոտում ե դեռ,
Գըղըղում են խոր ձորերն ահարկու,
Գուադարրամի լեռները աջնտեղ
Հագեղ են ծխի թանձրը վերարկու:



ԳԻՆԸ 1 ՌՈՒՐԼԻ

Գ. Տարյան
Юные Герои Испании
Гиз ССР Армения

« Ազգային գրադարան



NL0409170



12598

